ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«23» 09 2024թ.
№ ՊՆՆՏ-ԳԿՎ-1459

«ՄԴՄ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 01315961
ՀՀ, ք. Երևան, Շիրազի փ. 20/2
հեռ. 096 101100, 041 050055
էլ. հասցեն՝ m.shinanyut@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԴՄ» ՍՊ ընկերության միջև 11.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/7-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՄԴՄ» ՍՊ ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 28.06.2024թ.-ը պետք է մատակարարեր 500 ք.մ «Մետաղական ցանցեր Ցանց պողպատե 3մմ բջիջը 100x100մմ», որոնց մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ՄԴՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) և 6.6 կետը՝ (Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով): ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. սեպտեմբերի 23-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ՄԴՄ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 5,288 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 04.09.2024թ. և 1,125 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 32,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 48,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. հոկտեմբերի 2-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 32,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 48,000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՄԴՄ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. հոկտեմբերի 2-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ